ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/42

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝
Բողոքաբեր՝ «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Բալասանյանի,

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Խաչպար» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 20.06.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ԱԲԿ19-ԳՀԱՊՁԲ3/1» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունելու թիվ 70-րդ, 95-րդ, 96-րդ, 97-րդ, 98-րդ և 99-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում,

2. Պարտավորեցնել «ԱԲԿ19-ԳՀԱՊՁԲ3/1» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին փոփոխելու թիվ 70-րդ, 95-րդ, 96-րդ, 97-րդ, 98-րդ և 99-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը՝ այնտեղից հեռացնելով «...գրանցված Եվրոմիության երկրներում...» պահանջը:

Բողոքը Բողոքներ քննող անձին է մակագրվել 18.06.2019թ.-ին, սակայն 19.06.2019թ.-ին բողոքը վերադարձվել է բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Արձանագրված թերությունները շտկվել է 20.06.2019թ.-ին և 21.06.2019թ.-ի որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, իսկ 27.06.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 27.06.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 18.07.2019թ.-ին:

2. <u>«Խաչպար» ՍՊԸ -ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Ալավերդու ԲԿ» ՓԲԸ-ն Բժշկական նշանակության ապրանքների ձեռբբերման նպատակով հայտարարության է հրապարակել «ԱԲԿ19-ԳՀԱՊՁԲ3/1» ծածկագրով գնանշման հարցման մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2019թ. հունիսի 10-ի թիվ 4 որոշմամբ՝ (կից փաստաթուղթ թիվ 1, էջեր՝ 1-2), որի հրավերի թիվ 70, 95, 96, 97, 98 և 99-րդ չափաբաժիններով պահանջվում են տարբեր տեսակի ախտահանիչ) նյութեր, որոնց համար «անվանումը» սյունակներում գրված է «....գրանցված Եվրոմիության երկրներում....» պահանջը (կից փաստաթուղթ թիվ 2, էջեր՝ 1-4):

Այդ պահանջը խտրական է, սահմանափակում է ԵԱՏՄ արտադրողների ապրանքների ներմուծմամբ և ՀՀ տարածքում դրանց վաճառքը իրականացնող կազմակերպությունների, այդ թվում նաև «Խաչպար» ՍՊԸ-ի հնարավոր մասնակցությունը տվյալ գնանշման հարցմանը, քանի որ ԵԱՏՄ արտադրողների ապրանքների համար պարտագիր պայմանը ԵԱՏՄ Մաքսային Միության Պետական գրանցման վկայականի առկայության պահանջն է, ինչը բացակայում է Պատվիրատուի պահանջների ցանկում, դրանով իսկ չհիմնավորված խոչընդոտներ են առաջացնում հնարավոր մասնակիցների,

այդ թվում նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար, հավասար պայմաններ չեն ապահովում հնարավոր մասնակիցների, այդ թվում նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար:

«Խաչպար» ՍՊԸ-ն ղեկավարվելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի «Ալավերդու ԲԿ» ՓԲԸ-ի կողմից «ԱԲԿ19-ԳՀԱՊՁԲ3/1» ծածկագրով գնանշման հարցման մասին հայտարարությունը և «ԱԲԿ19-ԳՀԱՊՁԲ3/1» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2019թ. հունիսի 10-ի թիվ 4 որոշմամբ հաստատված «Բժշկական նշանակության ապրանքների» ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման հրավերը հրավերի թիվ 70, 95, 96, 97, 98 և 99-րդ չափաբաժինների մասով:

Վերոգրյալ փաստերը, ներկայացված փաստաթղթերը ապացուցում են, որ «Ալավերդու ԲԿ» ՓԲԸ-ի «ԱԲԿ19-ԳՀԱՊՁԲ3/1» ծածկագրով գնանշման հարցման հրավերի «անվանումը» այունակներում գրված «...գրանցված Եվրոմիության երկրներում....» պահանջը՝

ա) չհիմնավորված խոչընդոտներ են առաջացնում հնարավոր մասնակիցների, այդ թվում նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար, հավասար պայմաններ չեն ապահովում հնարավոր մասնակիցների, այդ թվում նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար հակասելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետով սահմանված պահանջներին,

բ) չեն նպաստում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և չեն խրախուսում նրանց միջև մրցակցությունը հակասելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետով սահմանված պահանջներին:»:

Ելնելով վերոգրյալներից, Ընկերությունը ներկայացրած բողոքով Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ԱԲԿ19-ԳՀԱՊՁԲ3/1» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունելու թիվ 70-րդ, 95-րդ, 96-րդ, 97-րդ, 98-րդ և 99-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում,

2. Պարտավորեցնել «ԱԲԿ19-ԳՀԱՊՁԲ3/1» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին փոփոխելու թիվ 70-րդ, 95-րդ, 96-րդ, 97-րդ, 98-րդ և 99-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը՝ այնտեղից հեռացնելով «...գրանցված Եվրոմիության երկրներում...» պահանջը:

3. <u>«Ալավերդու» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 24.06.2019թ. գրությամբ դիմել է «Ալավերդու» ԲԿ ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 20.06.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն գրությամբ հայտնել է հետևյալը.

««Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 12.06.2019թ «ԱԲԿ19-ԳՀԱՊՁԲ3/1» ծածկագրով հայտարարված բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում մրցույթի հրավերով ներկայացված թիվ 70,95,96,97,98,99 չափաբաժիններով համարժեքի համար սահմանվել է Եվրոմիության երկրներում գրանցված լինելու պահանջ, ինչը դրված է եղել նաև նախորդ (2019թ առաջին կիսամյակի) մրցույթի հրավերում որի վերաբերյալ մասնակիցների կողմից բողոքներ չի եղել:

«ԱԲԿ19-ԳՀԱՊՁԲ3/1» ծածկագրով հրավերի հայտերը բացվել են 19.06.2019թ-ին ժամը 15:30-ին և թիվ 70,95,96,97,98,99 չափաբաժիններով մասնակցել են 1-ից ավելի մասնակիցներ, մրցույթը գտնվում է անգործության ժամկետում, մասնակիցների վերաբերյալ հարցումները ուղարկված են ՊԵԿ:

Հաշվի առնելով, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը վերաբերվում է տեխնիկական բնութագրերին և ստացվել է հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո, ուստի ՀՀ գնումների մասին օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն ենթակա է մերժման:

Նշված նյութերը կիրառվում են ախտահանման նպատակով, միտված են պացիենտների և բուժաշխատողների անվտանգության, ներհիվանդանոցային վարակներից պաշտպանելուն, ինչի պատճառով «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն խիստ կարևորում է նշված ախտահանիչ նյութերի որակական ցուցանիշները: Ներհիվանդանոցային վարակների բացառման նպատակով, ինչպես նաև կենտրոնի կողմից մշտապես իրականացված ախտահանման որակի ստուգումները, հիմք են տվել եզրակացնելու նշված ախտահանիչ նյութերի որակական առավելությունների և արդյունավետության մասին:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/42 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի փաստերի համաձայն՝

«Ալավերդու» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 12.06.2019թ. հայտարարվել է «ԱԲԿ19-ԳՀԱՊՁԲ3/1» ծածկագրով գնանշման հարցման մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

Մրցույթի հայտերի բացման նիստի օր է սահմանվել 19.06.2019թ.-ին:

Ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով թիվ 70-րդ, 95-րդ, 96-րդ, 97-րդ, 98-րդ և 99-րդ չափաբաժինների համար, որպես ապրանքի անվանում և ապրանքային նշան սահմանվել է հետևյալը.

70-րդ չափաբաժնի համար նախատեսվել է. «Ժավել սոլիդ կամ համարժեք, գրանցված Եվրոմիության երկրներում»,

95-րդ չափաբաժնի համար նախատեսվել է. «Հեքսանիոս կամ համարժեք, գրանցված Եվրոմիության երկրներում»,

96-րդ չափաբաժնի համար նախատեսվել է. «Անիոզիմ ԴԴ1 կամ համարժեք, գրանցված Եվրոմիության երկրներում»,

97-րդ չափաբաժնի համար նախատեսվել է. «Անիոսժել կամ համարժեք, գրանցված Եվրոմիության երկրներում»,

98-րդ չափաբաժնի համար նախատեսվել է. «Անիոս ԴԴՍԽ կամ համարժեք, գրանցված Եվրոմիության երկրներում»,

99-րդ չափաբաժնի համար նախատեսվել է. «Սավոն ԴՈՒ կամ համարժեք, գրանցված Եվրոմիության երկրներում»:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 20.06.2019թ. ներկայացված բողոքն ենթակա է բավարարման մասնակի, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 13-րդ հոդվածի.

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

«Ալավերդու» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 12.06.2019թ. հայտարարվել է «ԱԲԿ19-ԳՀԱՊՁԲ3/1» ծածկագրով գնանշման հարցման մրցույթ, իսկ հայտերի բացման նիստի օր է սահմանվել 19.06.2019թ.-ին:

Ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով թիվ 70-րդ, 95-րդ, 96-րդ, 97-րդ, 98-րդ և 99-րդ չափաբաժինների համար, որպես ապրանքի անվանում և ապրանքային նշան սահմանվել է, որ նշված ապրանքները պետք է գրանցված լինեն Եվրոմիության երկրներում:

Բողոքներ քննող անձը արձանագրում է նաև, որ Մրցույթի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված՝ «ապրանքները պետք է գրանցված լինեն Եվրոմիության երկրներում» պահանջը խտրական է, հնարավորություն չի տալիս ճշգրիտ ընկալել գնման առարկան, չի ապահովում մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված չէ և համարժեք չէ այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բացի այդ, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ «Ալավերդու» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱԲԿ19-ԳՀԱՊՁԲ3/1» ծածկագրով մրցույթի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ չեն նկարագրում ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ հանգեցնելով տարակերպ մեկնաբանության: Պատվիրատուն, նման բնութագրեր սահմանելով, հնարավոր մասնակիցների համար չի ապահովել մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ առաջացնելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները հիմնավոր են, իսկ Մրցույթի պահանջները անհիմն են և սահմանափակում են հնարավոր մասնակիցների հավասար իրավունքները:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից առկա է Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում, ինչը հանգեցնում է թիվ 70-րդ, 95-րդ, 96-րդ, 97-րդ, 98-րդ և 99-րդ չափաբաժինների մասով Մրցույթը չկայացած հայտարարելուն:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից նշված այն դիրքորոշմանը, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը վերաբերվում է տեխնիկական

բնութագրերին և ստացվել է հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո, ուստի Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն ենթակա է մերժման, ապա այդ մասով Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝

1) պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում.

2) գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե բողոքը չի բավարարում սույն հոդվածի պահանջները, ապա բողոքն ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում գնումների հետ կապված բողոքներ քննող անձն այդ մասին գրավոր տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով արձանագրված թերությունները վերացնելու երկու աշխատանքային օր ժամկետ: Ընդ որում, եթե սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված ժամկետում ներկայացված բողոքը չի բավարարել սույն հոդվածի պահանջները, ապա սույն մասով սահմանված ժամկետում շտկված և գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքը համարվում է սահմանված ժամկետում ներկայացված:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ եթե մասնակիցը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը: Այդ ժամկետում ներկայացված բողոքը, եթե չի բավարարել Օրենքի 50-րդ հոդվածի պահանջներին և այն վերադարձվել է, ապա երկու աշխատանքային օրվա ժամկետում շտկվելու և Բողոքներ քննող անձին ներկայացվելու դեպքում, այն համարվում է սահմանված ժամկետում ներկայացված:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքը ներկայացվել է 18.06.2019թ.-ին՝ մինչև հայտերի բացման պահը: Սակայն 19.06.2019թ.-ին բողոքը վերադարձվել է՝ բողոքում առկա թերությունները շտկելու համար: Արձանագրված թերությունները շտկվել է 20.06.2019թ.-ին, ուստի տվյալ պայմաններում բողոքը համարվել է սահմանված ժամկետում՝ 18.06.2019թ.-ին ներկայացված և ընդունվել է վարույթ:

Անդրադառնալով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքում նշված «ԱԲԿ19-ԳՀԱՊՁԲ3/1» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին թիվ 70-րդ, 95-րդ, 96-րդ,

97-րդ, 98-րդ և 99-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը փոփոխելուն, այն է՝ «…գրանցված Եվրոմիության երկրներում…» հեռացնելուն պարտավորեցնելու պահանջին, ապա այս մասով Բողոքներ քննող անձը փաստում է, որ Մրցույթի հայտերի բացման նիստի օր էր սահմանվել 19.06.2019թ.-ին, իսկ Օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ, հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ, ուստի, նման պայմաններում, նշված պահանջն ենթակա չէ բավարարման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 20.06.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

Պարտավորեցնել «ԱԲԿ19-ԳՀԱՊՁԲ3/1» ծածկագրով գնանշման հարցման մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունելու թիվ 70-րդ, 95-րդ, 96-րդ, 97-րդ, 98-րդ և 99-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում:

Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**